ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄՐՑՈՒՅԹ

22.11.2023 18:26

2024 թվականի համար (հունվար ամսից) նախատեսվող հանրային պաշտպանների թափուր տեղերը (հաստիքները), այն է՝ Երևան քաղաքում քրեաիրավական մասնագիտացմամբ 3 ամբողջական հաստիք (**այսուհետ՝ Թափուր տեղեր**), համալրելու համար,

ինչպես նաև 2024 թվականի ընթացքում **առաջանալիք** թափուր հաստիքները համալրելու նպատակով հանրային պաշտպանների թեկնածուների ցուցակ ձևավորելու համար՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ՝ Պալատ**) հայտարարում է հետևյալ մրցույթները (**այսուհետ՝ Մրցույթ**)՝

1) **քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության հանրային պաշտպանների նշանակելու համար մրցույթ**՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների հնարավոր (տարվա ընթացքում առաջացող) թափուր հաստիքները համալրելու համար.

2) **քրեական ուղղվածության հանրային պաշտպանների նշանակելու համար մրցույթ**՝ Երևան քաղաքի Թափուր տեղերը (3 հաստիքները), ինչպես նաև Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների հնարավոր (տարվա ընթացքում առաջացող) թափուր հաստիքները համալրելու համար։

Տեղեկացնում ենք, որ՝

1) **Մրցույթի գրավոր փուլը** կանցկացվի ՀՀ, ք. Երևան, Ջաքյան 7-3 հասցեում (ՀՀ փաստաբանական ակադեմիա, 3-րդ հարկ) **2023 թվականի դեկտեմբերի 7-ին, ժամը 11.00-ին.**

2) Մրցույթին մասնակցելու համար կարող է դիմել **փաստաբանը, որի արտոնագրի գործողությունը դիմելու պահին կասեցված չէ,** ինչպես նաև Պալատի **որակավորման հանձնաժողովի վկայագիր ստացած անձը**.

3) Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են սույն հայտարարության հրապարակելու օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 4-ը ներառյալ՝ յուրաքանչյուր

աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ը ՀՀ, ք. Երևան, Ջաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում.

4) փոստով ուղարկված դիմումները չեն համարվի ընդունված, եթե ՀՀ փաստաբանների պալատը ծրարը փաստացի ստանա 2023թ. դեկտեմբերի 4-ից հետո.

5) Մրցույթի գրավոր փուլի տևողությունը սահմանվում է 4 (չորս) ժամ։

6) **Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդը կհրավիրվի հարցազրույցի՝** Պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի 4.11 կետի համաձայն,

ԲԵՌՆԵԼ ԴԻՄՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })